


# Ա Յ Գ Ե Կ Ո Ւ Թ

(ՀՍԽՀ Հողժողովանաթի հրահանգը՝ խաղողի բերա՞ւաւաթի յե՛ր հրա  
սեխանիական վերահաւան ժամանակ կորուստներ ղեմ պայաբ  
կազմակերպելու մասին)





634.87

# Ա Յ Գ Ե Կ Ո Ւ Թ

(ՀՍԽՀ Հաղթականասի նրանանգր՝ խաղողի բերանավառի յեկ նրա  
սեխնիկական վերամտակնան ժամանակ կոթուսների դեմ պայքար  
կազմակերպելու մասին)

A II  
38176



11



## Հ Բ Ա Հ Ա Ն Գ

**ԽԱՂՈՂԻ ԲԵՐՔԱՅԱՎԱՔԻ ՅԵՎ ՆՐԱ  
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԵՐԱՄՇՈՎԱԿԱՆ ՓԱՄԱՆԱԿ  
ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ՊԵՄ ՊԼՅՔԱՐ  
ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Բերեանավաճի ամբողջ աշխատանքները պե՛տ է կատարվեն կորուստների դեմ պայքար կազմակերպելով» (Համ. Կամկուսի Կենսկումի յեվ Միուրթեան-կան Ժողկավխորնի վորուումից):

Այգեգործութիւնը ժողովրդական անտեսութեան մեջ իր պատկառելի տեղն ունի ինչպես բան-մատակարարման, այնպես և բարձրորակ եքսպորտային մթերքների արտադրութեան մեջ:

Այս տարի, շնորհիվ համեմատաբար ավելի բավարար ժշակութեան, խաղողի այգիների միջին բերքատվութիւնը բարձր է՝ համեմատած նախորդ տարիների հետ: Աշտարակում և Վաղպատում հեկտարից սպասվում է 60—65 ցենտ., Ղամաշլվում և Վեդիում՝ 70—75 ցենտ., և այլն: Սակայն այս բավարար համարել չի կարելի: Իե՛ուս ազրոտեխնիկական աշխատանքները լրիվ ու ժամանակին չեն կատարվում և վոչ մի ջրջանում: Իրա հետ միասին, դեռ չի ապահովվում բարձր բերքատվութիւնը՝ հեկտարին 100 ցենտներ և ավելին: Ուստի ավելի ուշադիր պետք է լինել լե-

դած բերքի նկատմամբ և ամեն կերպ պալքարել կորուստ-  
ների դեմ:

Ամեն տարի, միայն խաղողի բերքահավաքի ժամանակ,  
անվուժութիւնն պատճառով, բերքի անաղին կորուստ ենք  
ունենում, կորչում և բերքի առնվազն 8—15<sup>0</sup>/<sub>10</sub>-ը: Նույն-  
պիսի կորուստներ լինում են և՛ խաղողի հասունացումից  
մինչև բերքահավաքը, և՛ տեխնիկական վերամշակման ու  
մատչողների ոգտագործման ժամանակ:

Վորպեսզի կորուստը նվազագույն չափի հասցվի և  
ստացվի հնարավոր մաքսիմում բերք, անհրաժեշտ և բեր-  
քահավաքի ժամրոյժ ընթացքում, մթերումների և տեխնի-  
կական վերամշակման ժամանակ՝ կազմակերպել և կիրա-  
ռել հետևյալ միջոցառումները:

Հասունացումից մինչև վերտահավաքի Երջանը.—  
Խտողը հասնելիս նրա թշնամիները շատանում են: Սկզբ-  
վում և գողութուն. գողանում են պատահական մարդիկ,  
գողանում են գողության մեջ հմտացած անճնավորու-  
թիւնները, այգիների մտտով անցնող ճամբորդները, գողա-  
նում են իրարից անպամ հարևան այգետերերը: Գողու-  
թյան ժամանակ վնասում են վոչ միայն բերքին՝ խաղողին,  
այլև վազին. շատ անպամ, առանց դանակի ու առանց  
մտածելու վազի մասին, քաշում են վողկուղից, վորի ըն-  
թացքում կտրվում են վազի մատերը և թևերը:

Բերքին մեծ չափով վնասում են նաև շները, թռչուն-  
ները և այլն: Այդ և պատճառը, վոր հենց սկզբից պետք և  
պալքարել կորստի դեմ՝ կազմակերպելով պաշտպանու-  
թյան գործը: Յուրաքանչյուր բերքահավաքի վորը պատասխա-  
նատու լին իրեն կցած այգու բերքատվութիւնը, իր լավա-  
գույն անդամներին պետք և հանճարարի խաղողի պաշտ-  
պանելու գործը:

Յաղոդի և նրա պրոդուկցիայի վորակն ապահովելու համար բերքահավաքից առնվազն 20 որ առաջ պետք է դադարեցնել ըստ տեսակի բուժումներն ու ջրելը:

Ինվենսարի յեվ ամանների պահպանումը.—Ձափազանց մեծ նշանակութուն ունի անհրաժեշտ ամանների և ինվենտարի ժամանակին, նախորդ պատրաստումն ինչպես բերքահավաքի համար, նույնպես և նրա տեխնիկական վերամշակության համար:

Ձպետք և մուսնալ, վոր համապատասխան, լրիվ և մաքուր ամաններն ու ինվենտարը վոչ միայն ապահովում են վորակով պրոդուկցիա, այլև ամենամեծ յերաշխիքն են՝ բերքն անկորուստ հավաքելու և վերամշակելու: Քիչ չեն դեպքեր, յերբ մեր ազգեգործական տնտեսութուններում, շատ քրված ամաններ գործածելու հեռանքով, ստացված դինին անդուրեկան, չուրահատուկ հոտ և ստացել:

Ուտի, չուրաքանչուր խորհտնտեսութուն և կոտնտեսութուն հնչվի պետք է առնի իր ազգիներից ստացվելիք բերքը, թե նրանցից ինչքանն և հանձնվելու գործարանին, ինչ քանակով և մնալու տնտեսության ներսում վերամշակելու համար, կամ թարմ վիճակում սպանելու, և այլն: Դրա համար էլ նախորդ պետք է պատրաստել բերքահավաքի և վերամշակման համար անհրաժեշտ ամաններն ու ինվենտարը:

Բերքահավաքի և վերամշակման ժամանակ գործածվող ամաններն ու ինվենտարը (կողովներ—կթոցներ, կաթսաներ, տակառներ, շաներ, պոմպեր, մամլիչներ, խաղողաջարդ մեքենաներ և այլն) պետք է լավ հակամեխել, լվանալ և մաքրել: Ուշադրութուն պետք է դարձնել մուսաններին և այն վալրերի վրա, վորտեղ խաղողը պետք է հավաքվի և վերամշակվի. նման տեղերը ևս պետք է հա-



կանխել և լավ լվանար: Ինովնտարը, ամանները, արանսպոր-  
տը պետք է պատրաստ լինեն բերքահավաքից առնվազն 10  
որ առաջ, մաքուր պահվեն մինչև գործածելը, և ընդհանրապես  
աշխատանքը պետք է դասավորել այնպես, վորպեսզի ամ-  
բողջ բերքահավաքն ընթանա առանց ընդհատումների և  
ավարտվի նախատեսված ժամկետում:

Անհրաժեշտ է բերքահավաքն ապահովել նաև վորա-  
կցալ կադրերով:

Այգեկուքի (այգեհաղի) ժամանակը. — Բերքի ամե-  
նաշատ կորուստը լինում է այգեքաղի ժամանակ. վորքան  
բերքն ու՛շ հավաքվի, այնքան կորուստը մեծ կլինի: Գի-  
նեգործության համար խաղողը պետք է քաղել նրա տեսի-  
նիկական հասունության ժամանակ, վորի համար պետք  
է խորհանտեսություններում և կոտնետեսություններում  
հատուկ հսկողություն սահմանել՝ հասունության ժամա-  
նակը վորոշելու: Սեզանի խաղողը պետք է սկսել քաղել  
այն ժամանակ, յերբ հասունացել է և կարելի չէ գործա-  
ծել: Ընդհանուր բերքահավաքը Հոգոկոմատի կողմից նա-  
խատեսված է հոկտեմբերի 1-ից մինչև 25-ը: Բերքահա-  
վաքը պետք է կատարել միաժամանակ՝ մասսիվներով և,  
վորքան կարելի չէ, ժամկետը պահպանելով: Բերքահավա-  
քի ժամանակ այդուհի ավելորդ մարդ չպիտի թողնել. ալ-  
դուհի պետք է աշխատեն կազմակերպված բրիգադներ  
ողակներ, վորոնց քանակը և արտադրողականությունը  
պետք է համապատասխանեն վորխաղբողականի և վերամը-  
շակման կարողությանը: Սաղողը քաղել խնամքով, ան-  
պալման սուր դանակով, վորչ մի դեպքում չի թուլյաարը-  
վում ձեռքով պոկոտելը, կամ անգամ բութ դանակներով  
քաղելը, վորի ժամանակ հատիկները հեշտությամբ են  
թափվում և անգամ մնասվում են վաղի մասերն ու թե-



վերը: Գետին թափված խաղողը պետք է խնամքով հա-  
վաքել, մաքրել և գործածել:

Անհրաժեշտ է լուրջ ուշադրութուն դարձնել քաղե-  
լու ժամանակ խաղողի տեսակաւորման վրա. պետք է  
փտածները, հիվանդութւններէից և վնասատուներէից  
վնասվածները, չհասածները, չոր մնացած վողկույզները  
ջուրէլ առողջներէից և առանձին հավաքել, չերբեք չխա-  
նել առողջներէ: հետ, քանի վոր վերջիններս աղուժ են  
արտադրանքի վորակի վրա բացասական իմաստով: Բրդ-  
գաղները պետք է հսկեն, վոր մշակները կողովները և  
դուլները գատարկելիս ու սալները բարձելիս խաղողը  
չթափեն, շղ չտան:

Քաղած խաղողը չերբեք չի թուլատարվում մինչև հրա  
փոխադրումն այգու մեջ ազատ տեղ, հողի վրա կուտակե-  
լը, ինչպես անում են այդ Ամարվի շրջանում. պետք է  
քաղել այնքան, վոր անմիջապես սալները հնարավորու-  
թւոն ունենան տեղափոխելու: Սալներով տեղափոխելիս  
խաղողն այնպիսի ամաններէ մեջ լցնել, վոր ճանապար-  
հին շիրան չթափվի (տակառ). կողովներով տեղափոխելը  
նպատակահարմար չէ:

Վորևս սառնա քաղելուց հետո նորից պետք է ըս-  
տուգել, և չեթե կան թողած վողկուղներ կամ գետին  
թափածներ, պետք է հավաքել, քանի վոր դեպքեր են  
լինում, չերբ քաղողները գիտավորչալ կերպով խաղողը  
պահում են թփերի վրա, վորպեսզի հետո իրենց համար  
քաղեն: Այգեքաղից հետո այգիներէ մեջ անասուններ  
բաց թողնելը խիստ արգելվում է:

Տեխնիկական վերաւեակվածն ժամանակը.— Մեր այ-  
գեգործական խորհանտեսութւններն ու կուրանտեսու-  
թւոնները, վորոնք մեծ տարածութւամբ խաղողի այգի-

ներ ունեն, խաղողի վերամշակման աշխատանքները պետք է մեքենայացման լենթարկեն: Մեքենայացրած գինեգործութիւունն ավելի քիչ կորուստ է տալիս, քան վոչ մեքենայացրածը: Ինքնաշեն մամլիչները կամ փոքր պտուտահավոր ճգմիչները հնարավորութիւնն չեն տալիս ստանալու խաղողի մաքսիմում հյութը կորուստը քիչ է լինում աշխատանքներն արագ կատարելու գեպըում, վոր և հնարավոր է միայն մեքենայացրած գինեգործութիւնն ժամանակ:

Պետք է հետեւել, վոր սալները դատարկելու և խաղողը շարդիչ, շանչահան մեքենաներին ու մամլիչներին տալու ժամանակ շող չտրվեն, դետին շթափվեն: Աշխատանքի լիուուն ժամանակ, բացի աշխատող բանվորներից, այլ «հյութեր» չպետք է ներկա լինեն:

Բրիդադիւրները պետք է հետեւեն, վոր մամլիչներէ ստաշ դրած ամանները և շիրալի (քաղցվի) տակառները շատ լցվելուց շթափվեն: Չաները, տակառները, կարասները չպետք է լրիվ լցնել, այլ պետք է մի քառորդով պակաս թողնել՝ խմորման (լեփ դալու) ժամանակ թափվելը կանխելու համար: Թմորման ժամանակ չաների, տակառների, կարասների ըերաններն ամուր չպետք է փակել, այլ պետք է անցք թողնել, ալլապետ ամանները կարող են պալթել:

Տեխնիկական վերամշակման բոլոր աշխատանքները պետք է կատարվեն մասնագիտական ցուցմունքների համաձայն:

Մնացորդների ոգսագործումը. — Գինեգործութիւնն մնացորդների ոգտագործումը մեծ նշանակութիւնն ունի. մնացորդը բաղմատեսակ մթերքներ է տալիս—գինեբար, տանին, լուղ, սպիրտ, սուրճին փոխարինող նյութ և այլն: Սա-

կախն ալլ միժերքները շի կարելի ստանալ, լեթե մնացորդը, ինչպես հարկն է, չստանալի: Ճշմոված մասսան պետք է անմիջապես մամլիչի տակից հավաքել և լցնել կարասները, տակառները կամ ցեմենտից շինած ավազանները և լավ սեղմել, ամրացնել: Վերջինից է կախված նյութի և նրա վերակի պահպանումը:

Գինու խմորումից հետո ամանների մեջ պայացած օրը (գիրքը) նույնպես պետք է խնամքով հավաքել և պահել:

Այն կազմակերպությունները, վորոնք անմիջապես գրազվում են գինեգործության մնացորդների ուտիլիզացումով, պետք է մոտիկ կանգնած լինեն խորհրդատեսական, կոլտնտեսական արտադրությունը՝ մնացորդները ժամանակին ոգտադործելու համար:

Նշված բոլոր աշխատանքների նկատմամբ յուրաքանչյուրն իր կատարած աշխատանքի համար պատասխանատու պետք է լինի սուանց գիմազրկության, լայն կիրառելով սոցմրցումն ու հարվածայնությունը. նա պետք է պաշքարի կորուստները դեմ և վորակական ցուցանիչները համար:

Շրջանային կազմակերպությունները պետք է լայն քննություն առարկա դարձնեն բոլոր միջոցառումները՝ կորուստները դեմ պաշքարելու հարցի վերաբերյալ և, տեղական պայմանները համաձայն, կիրառեն կյանքում:


Հողծողկում՝ Վ. ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

Այգե-բանջ-վարչ. պետ՝ Ա. ՎԱՐԳՅԱՆՅԱՆ



Գ. ՄԱՏԿՈՐՅԱՆ

Ա Յ Պ Ե Կ Ո Ւ Թ



Հասել ե խորհանտեսական և կոյտնտեսական ալգի-  
ների խաղողի բերքը: Մանր բեռան տակ հրճվում են  
վաղերը խարջու, հաչարաչի, քիշմիշի, կախեթի և այլ  
բազմաթիվ փոփոխանների քաղցր, հլու թառառ, կենսա-  
բար վողկուղները ճրագի պես վառվում են թփերի վրա:  
Յերը մանուկ ես մեր ալգիները, զգում ես, վոր սոցիա-  
լիստական դաշտերի հարվածալիններն արդեն բռնել են  
կուլտուրական աշխատանքի և բարձր բերքատվության  
ճանապարհը:

Մի նալեք առաջին խորհանտեսության Դալմալի ալ-  
գիներին, լերրորդ խորհանտեսության մուսկատներին,  
Վաղարշապատի, Աշտարակի, Ղամարլուի կոյտնտեսու-  
թյունների ալգիներին — մշակված են նրանք՝ փորված,  
քաղհանված, բուժված: Թաղողի վողկուղները լավ խնա-  
մած մանուկների նման ծիծաղում են դեմքիդ, առաջաց-  
նելով քո մեջ ուրախության քաղցր զգացմունք: Կոյ-  
տնտեսական կարգերի ուժը մեծ ե. սոցիալիզմը հաղթա-  
նակում ե ամեն տեղ: Չես կարող չհիշել կուսակցության  
17-րդ համագումարում մեծ առաջնորդի արտասանած  
խորհմասա խոսքերը.

«Ըստ բանի էյուրոյան՝ հաշվեսու ժամանակաբաժնի  
գյուղատնտեսության համար վոչ այնքան արագ վերելի յեվ  
նուժկու քափ առնելու ժամանակաբաժնի եր, վորքան  
մեծավորագոյնն ապագայում այդպիսի վերելի յեվ այդ-  
պիսի քափ ունենալու համար նախադրյալներ ստեղծե-  
լու ժամանակաբաժնի»: Առաջին հնգամյակի տարիներում



մենք ստեղծեցինք հզոր սոցիալիստական գլուզամանուսուկթյուն, իսկ այսօր արդեն քաղում ենք նրա լիառատ պտուղները: Մեր այգիների նախորդ և այս տարվա անընդհատ բարձրացող բերքն անցյալի համեմատութիամբ մի փալլուն ապացույց է առաջնորդի խորիմաստ խոսքերի, այն բանի, թե ինչ կարող է անել կուրեկախի կամքը, թե ինչպես կոլանտեսական կարգերի շնորհիվ այսօր արդեն մենք ունենք բոլոր հնարավորութիւնները՝ գլուզամանուսուկթյան բոլոր ճյուղերում տալու բարձր բերք, իսկ այգիների բերքատուութիւնն ասպարիզում մոտակա տարիներում հասնելու այն դրութիւն, վեր մեկ հեկտարից ստանանք վոչ թե 65—75, այլ 100—150 ցենտներ բերք:

Մտեննում են բերքահավաքի որերը: Մեր խորհաղնտեսութիւններն ու կոլանտեսութիւններն արգելադրութիւնն առպարիզում թեւեղիւում են մի նոր, պատասխանատու շրջան, մի շրջան, յերբ ամբողջ տարվա քրքատանջան աշխատանքից հետո պէտք է հավաքել աշխատանքի քաղցր պտուղը: Լցնենք մեր մասնաններն ու ամբարները լիառատ սոցիալիստական բերքով, վերը ասանյակ հաղարավոր ազնիվ, աշխատող կոլանտեսականներին խոստանում ենք որ, ունեւոր, չեւշանիկ և կուլտուրական կյանք:

## ՆԱԽԱԳԼՅՐԱՍՏՎԵԼ ԱՅԳԵԲԸՂԻՆ

Այլեքազի և ընդհանրապես ամեն մի բերքահավաքի ամբողջ հաջողութիւնը կախված է նրանից, թե ինչպես են նախապատրաստվել: Գործի լավ նախապատրաստումը հաջողութիւնն կեան է: Քիչ չեն լեղել դեպքեր, յերբ չնախապատրաստվելու կամ վատ նախապատրաստվելու հետեանքով բերքահավաքն ընթացել է անկազմակերպ, աշխատանքը ձգձգվել է՝ տեղի աւելով խոշոր կորուստներին:

Բերքահավաքի նախապատրաստութիւնը պետք է սկսել այգիների պահպանութեան ուժեղացումից: Վերջին հասունանում է բերքը, մոտենում է նրա հավաքելու շրջանը, այնքան շատանում են նրա թշնամիները, գողտնում են մարդիկ, փչացնում են անասունները, ուտում են թռչունները: Պետք է կազմակերպել անխնա պալքար բույս տեսակի գողութիւնների, հափշտակումների, փչացումների դեմ, վորպեսզի մեր այգիներից վոչ մի վողկուզ խողող չպակասի: Պետք է արգելել բույս տեսակի անասուններն ու թռչուններն այգիներում պահելը: Գողութեան ու փչացման ամեն մի դեպք պետք է հաշտութեամբ և պատժով խորհրդային որենքների ամբողջ խումբով:

Մի վերջին անգամ ամենուրեք պետք է ստուգել, թե ինչպես է դրված պահպանութեան գործը, ստուգել պահակներին, փոխել վատերին, լրացնել պակասը: Կազմակերպել դիշերային հսկիչ պստեր, ստուգել, թե արդյոք պահակները չեն քնում գիշերները, և այլն:

Պետք է իմանալ, վոր պահպանութեան լավ կազմակերպումից է կախված մեր քրտնաշան աշխատանքով ստեղծած բերքի լրիվ հավաքումը:

## ՊԼԱՆԱՎՈՐԻ. ԲԵՐՔԱՎԱՎՔԸ

Մոցիլայիստական տնտեսութիւնը պլանային տնտեսութիւն է. այնտեղ ամեն ինչ կատարվում է նախորդ մշակված պլանով: Այդ պատճառով կոլտնտեսութիւնում ևս ամեն մի աշխատանք պետք է ընթանա նախորդ ծրագրված ձևով: Բերքահավաքը հաշոգութեամբ կատարելու համար անհրաժեշտ է ստուգել ըստ բրիգադների, ըստ

առանձին հողամասերի և այգիների՝ մեր այգիները բեր-  
քի չափը և դրա հիման վրա կազմել բերքահավաքի վերջ-  
նական, ճշտված պլանը: Այդ պլանը պետք է հասցնել  
բրիգադ, սզակ և մասնաշահմանացնել բոլոր աշխատա-  
փոքները մեջ: Յուրաքանչյուր կուլանտեսական, ինչպես և  
խորհանտեսութեան ամեն մի աշխատող կատարելապես  
պետք է իմանա իր բրիգադի պլանը, իմանա յուրքան-  
չյուր առանձին այգուց սպասվող բերքի քանակը:

Պետք է վերանայել արտադրանքի նորմաները, յեթե  
դա անհրաժեշտ է, ճշտել նրանք ըստ բրիգադների, ըստ  
առանձին այգիների, այս տարվա բերքատուփյան համա-  
ձայն, և այդ նորմաները նույնպես լաջն կերպով մասնա-  
շահմանացնել: Գործը պետք է կազմակերպել աջակես, վստ  
ամեն մեկն իմանա բերքահավաքի ընթացքում իր կատա-  
րելիք աշխատանքը և վարձատրման չափը:

Կուլանտեսական բրիգադները, ինչպես և ամբողջ կու-  
լանտեսութեանը և խորհանտեսութեանը պետք է մշակեն  
բերքահավաքի շրջանի աշխատանքների սրացուցային ծը-  
րագիր, վորակե պետք է կոնկրետ կերպով նշվեն յուրա-  
քանչյուր աշխատանքի կատարման ժամանակ, այդ աշխա-  
տանքի համար հատկացվող բանվորական և քաշող ուժը,  
ամբացվող ինվենտարն ու ամանեղենը և պտտախանա-  
տու անձնավորութեանը:

Աշխատանքի լավ դասավորումից, ուժերի ճիշտ բաշ-  
խումից և կախված բերքի արագ և անկորուստ հավաքումը:

## **ՆԱԽԱԳԱՅՐԱՍԵՆԻ ԲԵՐՔԱՎԱԿԵԻ**

### **ՅԵՎ ՎԵՐԱՄՇԱԳՄԱՆ ԻՆՎԵՆՏԱՐԸ**

Բերքը հաջողութեամբ և առանց կորուստների հավա-  
քելու համար վճռական նշանակուփյուն ունի ինվենտարի  
նախապատրաստումը:

Ինվինտարի նախապարտատու թիւերը պետք է սկսել ամենափոքր գործիքներից՝ դանակներից, դուլերից, կշռքներից՝ մինչև խոշոր տակառներն ու չաները:

Բերքահավաքի պլանի համաձայն, պետք է ստուգել ամբողջ ինվինտարը: Անհրաժեշտ է հաշվառման յնթարկել չի դածը, նորոգել հները, շտապ կարգով ձեռք բերել պահաս յեղածը: Պետք է լիանալ մեծ և փոքր տակառներն ու չաները, ծծուձք տալ նրանց և բոլորը պահել սարքին վիճակում՝ մինչև բերքահավաքը:


Ինչ ինվինտար և հարկավոր բերքահավաքի և վերամշակման համար:

Բերքահավաքի համար այգուձ պետք է ունենալ սուք դանակներ, ետի մկրատներ (սեկատոր), դուլեր և կողովներ: Դուլերը պետք է լինեն մաքուր, չժանդոտված. լավ է ունենալ եմալած դուլեր, իսկ յեթե չկան այդպիսիները, պետք է աշխատել ձեռք բերել ներկած դուլեր, կամ տեղում հնարավորութուն ստեղծել յեղածները ներկելու, վարովհետև թիթեղե դուլերի գործածութունն անապտակահարմար է. նրանք ազդում են խաղողի վորակի վրա և փշացնում այն:

Այգուձ պետք է ունենալ նաև շալակի տակառներ և պահեստի խոշոր տակառներ՝ մինչև մթերակայան փոխադրելը հավաքված խաղողը նրանց մեջ լցնելու համար: Այգուձ անհրաժեշտ է ունենալ նաև կշռքներ և կշռաքարեր:

Սաղոդն այգուց մթերակայան փոխադրելու համար պետք է ունենալ սալերի և ֆուրգոնների վրա հարմարեցված բաց տակառներ:

Սաղողի ընդունման համար «Արարատ»-ի մթերման կետերում աշխատանքը պետք է այնպես կազմակերպել,



վոր յեկած խաղողն անմիջապես ընդունվի: Մինչդեռ  
ամենն աարի, ով յեղել է «Արարատ»-ի մթերման կետերում,  
տեսած կլինի, թե ինչ խոշոր հերթեր են դոյանում այն-  
տեղ: Իրա հետևանքն այն է լինում, վոր խաղողն այդում  
քաղում են և տեղ չլինելու պատճառով լցնում են գե-  
տին ու փչացնում, կամ ստիպված դադարեցնում են աշ-  
խատանքը:

Մթերման կետերում պետք է պատրաստել խոշոր  
կշեռքներ՝ ամբողջ սայլը կամ Փուրգոնը միանգամից կշռե-  
լու համար: Հերթեր շարաշացնելու համար պետք է  
պատրաստել բարձրացնող սարքավորում (բլոկ, ճախարակ)  
տակառները միանգամից բարձրացնելու և դատարկելու  
համար: Պետք է ունենալ շալակի տակառներ, դուլլեր,  
յեղաններ, թիակներ: Պետք է նախապատրաստված լինեն  
վերամշակման հրապարակները (կալերը), վորպեսզի կշռված  
խաղողն արագ կերպով դատարկվի:

Մթերման կետերը պետք է լրիվ կերպով ապահովված  
լինեն վերամշակող սարքավորումով, ինչպիսին են՝ ջարդիչ-  
ները, չանչհանները, մամուլները, պոմպերը (նասոս) և այլն,  
վորպեսզի ընդունած խաղողն արագ կերպով վերամշակվի  
և չխանգարի անընդհատ հանձնողներին:

Ֆուտնտեսականների ընդհանուր վերամշակման կետե-  
րում նույնպես պետք է պատրաստել վողջ սարքավորու-  
մը: Լավ կլինի, յեթե այդ աշխատանքի ղեկավարները մեկ  
տնգամ այցելեն «Արարատ» տրեստի մոտակա մթերակա-  
յանը և տեսնեն, թե նրանք ինչպե՞ս են նախապատրաստ-  
վում:

Ֆուտնտեսությունների վերամշակման կետերում նույն-  
պես պետք է ունենալ կշեռքներ, դուլլեր, յեղաններ, թի-  
կեր, մամուլներ, պոմպեր, տակառներ և այլն: Չեք մշակ-

ման ինվինտարը պետք է մաքուր լվանայ և ախտահանել  
ծծմբով:

Այն կոտնտեսականներն ու մենատնտեսները, վորոնք  
վերամշակելիք խաղող ունեն, պետք է նախօրոք պատրաստ-  
վեն: Նրանք պետք է ձեռք բերեն տակառներ, կարաս-  
ներ, հարմարություններ ստեղծեն ջեջան (կնջեռ) պահելու  
համար, և այլն:

Այգեքաղի ինվինտարը վերը նշված բոլոր սղահներում  
այնպես պետք է նախապատրաստել, վոր բերքահավաքի  
առաջին օրվանից վոչ մի բանի պակասություն չզգացվի:  
Կոտնտնտեսներում բրիգադիրներն անձամբ պետք է  
զբաղվեն այդ աշխատանքով:

Յերբ ամբողջ ինվինտարը պատրաստված է, պետք է  
մի վերջին անգամ ստուգում անցկացնել և հատուկ մար-  
զիկ նշանակել, վորոնք հսկելու և խնամելու յեն այն՝ մին-  
չև բերքահավաքը:

## **ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼ 'ՏՐԱՆՍՊՈՐՏՆ ՈՒ ՃԱՆԱՊԱՐԿՆԵՐԸ**

Բերքահավաքին կազմակերպված դիմավորելու գոր-  
ծում խոշոր տեղ է գրավում տրանսպորտի և ճանապարհ-  
ների նախապատրաստումը: Վորքան էլ լավ նախապատ-  
րաստված լինենք, յեթե վատ է կազմակերպված փոխա-  
դրական գործը, յեթե պատրաստ չեն ճանապարհներն ու  
կամուրջները, աշխատանքն անհաջող կընթանա՝ տեղի առ-  
լով զգալի կորուսաների:

Բրիգադները, համաձայն բերքի պլանի, պետք է ստու-  
գեն ամբողջ տրանսպորտի գրությունը: Պետք է իմանայ,  
թե ամեն օր քանի սայլ կամ ֆուրգոն է պահանջվում:  
Պետք է ստուգել, թե սայլերն ու ֆուրգոններն ինչ չափի



վերանորոգման կարիք ունեն և վերանորոգել տալ առաջին հերթին: Նախորդ սայլերի և Ֆուրգոնների վրա պետք է հարամարեցնել խաղող փոխադրող տակառներ:

Անհրաժեշտ է ստուգել քաշող ուժը, պարզել նրա դրուժյունը և, լեժե անհրաժեշտ է, բերքահավաքից մի քանի որ սուտջ հանդիսա տալ ու լավ կերակրել կենդանիներին, քանի վոր բերքահավաքի ամբողջ ընթացքում, վարը տեկու յե 20—25 որ, նրանք աշխատելու յեն լարված կերպով:

Բերքահավաքը լավ կազմակերպելու համար պակաս նշանակություն չունի ճանապարհների և կամուրջների կարգի բերելը:

Այգեքաղի ժամանակ յերբեմն ականատես ևս լինում այսպիսի փաստերի.— խաղողով բարձած սայլը կամ ֆուրգոնը կամրջով անցնելիս անիվը կամրջից ցած և ընկել, ֆուրգոնը շուռ և ըկել, շիրան և խաղողը թափվել են հողերի ու ցեխերի մեջ, կտորվել և և՛ սայլի այս կամ այն մասը, ջարդվել են տակառները, վերավորվել և սայլապանը, և այլն: Կամ բարձած սայլը կանդ և առել ճանապարհի լճացած ջրի և խոր ցեխի մեջ, ու չեզները չեն կարողանում սայլը դուրս բերել այդտեղից: Հաճախ տեսնում ևս, թե ինչպես ճանապարհի խորդուրդը լինելու, տակառները սայլի վրա լավ չամրացնելու հետևանքով շարժվում են այս ու այն կողմ և թափում շիրալի զգալի մասը:

Այս բոլորը վոչ միայն դժվարացնում ևս դանդաղեցնում և փոխադրումը, այլև անդրադառնում և բերքի քանակի ու վորակի վրա՝ զգալի վնասներ պատճառելով մեր առատեսութանը: Ահա այդ ամենից խուսափելու համար պետք է նախորդ վերանորոգել քանդված կամուրջները, լայնացնել նեղ կամուրջները, ստուգել նրանց ամրությունը:



Պետք է հավաքել ճանապարհների վրա թափված մանր օւմեծ քարերը, շարացնել լճացած ջրերը, հարթել խորդուրորդ տեղերը (խանդակները) և հատուկ ուշադրութիւն դարձնել այգեմիջան այն միջնակների վրա, վարտեղից անցնելու յնն սալերը: Այդպիսի տեղերը նուէնպէս պետք է հարթվեն, Վորպեսզի վտխադրումն անխափան կերպով բնթանա:

## ՄԱՌԱՆՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Բերքահավաքի նախապատրաստման կարևորագույն ողակներից մեկն էլ մառանների նախապատրաստումն է: Մառանների նախապատրաստման նշանակութիւնը բարձրանում է հատկապէս այն պատճառով, վոր այգիներէ լավ մշակութեան և բերքատվութեան անընդհատ բարձրացման շնորհիվ, մեր այգեգործական կոլտնտեսութիւնները պետութեան և մթերոդ մշուս կազմակերպութիւնների հանդեպ իրենց ունեցած պարտավորութիւնները կատարելով և գերակատարելով հանդերձ՝ մեծ քանակութեամբ խաղող են ունենում: Նրանք բերքի մի մասը վերամշակում են ընդհանուր ձևով, իսկ խոշոր մասը բաշխում են կոլտնտեսականների աշխտերին, իսկ այդ մասը կոլտնտեսականները վերամշակում են իրենց մոտ: Մշուս կողմից՝ կոլտնտեսականները քաղականաշափ բերք են ստանում իրենց հատկացված տնամերձ այգիներից, վորի մի զգալի մասը նուէնպէս վերամշակվում է: Ահա այս տեսակետից էլ մառանների նախապատրաստումը տարվում է յերկու ուղղութեամբ՝ կոլտնտեսութեան ընդհանուր մառանների նախապատրաստում և կոլտնտեսականների մառանների նախապատրաստում:

Յերկու դեպքում էլ հատուկ ուշադրութիւն պետք է

դարձնել մառանների մաքրության վրա: Այդ տեսակեանց ընդհանուր մառանները պետք է օրինակելի լինեն: Պետք է իմանալ, վոր գինին արագ փչացցող մթերք է. նա հեշտությամբ ընդունում է իր մեջ շրջապատում գտնված վտա հոտերը, ինչպես և հիվանդանում է իր մեջ ընկած գանազան սնկերի կամ բակտերիաների ազդեցությունից: Հետևյալս, պետք է աշխատել, վոր մառանում կողմնակի վտա հոտեր, ինչպես և հիվանդություններ առաջ բերող միկրոօրգանիզմներ չլինեն, վորի համար պետք է շատ մեծ ժաքրություն պահպանել: Մինչդեռ շատ քիչ կուլտընտեսություններում մենք մաքուր և ուղղապահական տեսակեանց քովարար պայմաններում գտնվող մառաններ ունենք:

Ի՞նչը պետք է նախապատրաստել մառաններում: Ամենից առաջ՝ պետք է հեռացնել այնտեղից բոլոր ավելարդ իրերը, ամեն տեսակի մթերքները, շարդված կամ դրծածության համար անպետք ստիպաններն ու կարասները՝ թաղնելով միայն այն, ինչ անհրաժեշտ է: Պետք է սպիտակեցնել պատերը, կանոնավորել մառանի հատակը. վերջինս, յեթե ցեմենտե յե, պետք է մաքուր լվանալ: Այնուհետև պետք է մի քանի անգամ լվանալ կարասներն ու ստիպանները և ծծմբով ախտահանել:

Ախտահանումը պետք է կատարել այսպես. կարասների համար կարելի յե վերցնել վորոշ քանակով ծծումբ, լցնել շաւքունե թասի կամ կավե ումանի մեջ, վառել ու կախել կարասում:

Գինու տակառների ախտահանման համար պետք է պատրաստել ծծմբե ժապավեններ, վոր և վառում ա կտրում են տակառի մեջ: Ծծմբե ժապավենը կարելի յե պատրաստել այսպես. վերցնել 3—4 սմ լայնությամբ և մատ

25—30 ամ յերկարությամբ թղթե ժապավեններ. թիթեղե կամ չուգունե ամանի մեջ լցնել ծծումբ և դնել կրակի վրա: Յերբ ծծումբը կհալվի, հեղուկ կդառնա, պետք և թղթե ժապավենները մի ծայրից բռնած թաթախել հեղուկի մեջ (սուջուխի նման) և չորացնել:

Ամբողջ մառանն ախտահանելու համար մառանի ծավալի յաւրաքանչյուր խորանարդ մետրին պետք և վերցնել 30 գրամ ծծումբ և այրել՝ նախարք փակելով դուռն ու լուսամուտաները և 5—6 ժամ թողնել, վոր ծծմբի ծուխը թափանցի մառանի բոլոր անկյունները:

Այս ամբողջ աշխատանքները մառանում պետք և տվարտել բերքահավաքից առնվազն 5—10 որ առաջ, վարպետի մառանը պատրաստ լինի հենց առաջին որվանից բնդունելու քաղած խաղողը:

## ԱՆԽՆԱ ՊԱՏԳԱՐԵԼ ԿՈՒԼԵԿԱՏԻՆ ՄԵՔԵՆԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ

Յուրաքանչյուր կոլտնտեսություն շահագրգռված պետք և լինի վոչ միայն բերքի քանակով, այլև պետք և ձեռք առնի բոլոր միջոցները՝ բերքի պահանջվող վորակն ապահովելու համար:

Բերքի վորակի բարձրացման համար հատկապես խոշոր նշանակություն ունի այգու ջուրը ժամանակին դադարեցնելը: Մեր վորոշ կոլտնտեսություններում շարունակվում և այն հին և վատ սովորությունը, յերբ բերքահավաքից ժի քանի որ առաջ այգին ջրում են: Այդ սովորությունը կուլտակային-առեվարական հոգեբանության մնացորդ և: Անխնա կերպով պետք և վերացնել այն ամենը, ինչ կուտակութունից վատ ժառանգություն և մնացել:

Կոլտնտեսական կարգերի հազթանակի շնորհիվ, դյու-

դացիութիւնը դարձել և իր հալալ աշխատանքի տերը, նա  
ինքն և տնօրինում իր ժրաշան աշխատանքով ստացված  
բերքը: Բերքը մենք հանձնում ենք մեր հարազատ պետու-  
թյանը, մեր կոտորատիվ կազմակերպութիւններին և հե-  
տեվաբար մենք պետք և որեցոր ուժեղացնենք պաշտօնը  
կուլակի մեքենայութիւնների դեմ-ազդին բերքահավաքից  
սառնջ շրեյու, բերքի քանակն արհեստականորեն բարձ-  
րացնելու համար:

Յուրաքանչյուր այսպիսի դեպք պետք և արժանանա  
ամենախիտ դատապարտման և պատժիլի որենքով:

Մենք պետք և պետութիւնը հանձնենք բարձր-  
րակ խաղող: Իսկ գրա համար, վորպես կանոն, ազդին վեր-  
ջին անգամ պետք և շրեյ վոչ ուշ, քան բերքահավաքից  
20—30 որ առաջ:

### ՅԵՐԲ ՍԿՍԵԼ ԱՅԳԵՎԱԼԸ

Համատարած այգեքաղը պետք և սկսել այն ժամա-  
նակ, յերբ խաղողը հասել և արդյունաբերական հասու-  
նության, այսինքն՝ յերբ նրա հասունութիւնը համապա-  
տասխանում և ավշալ այգեգործական արդյունաբերու-  
թյան նպատակներին: Այսպես՝ խաղողի հյութ պատրաստե-  
լու համար կարելի չե այգին ավելի շուտ քաղել, քան  
թունդ և լիքցորային գինիներ պատրաստելու համար, վոր-  
պեսպի ստացվի թարմացուցիչ և զովացուցիչ հատկու-  
թիւն ունեցող խմիչք:

Մեր յերկրի հողային և կլիմայական պայմանները  
թույլ են ապրիս պատրաստելու թանգարժեք և եքսպոր-  
տային նշանակութիւն ունեցող թունդ և լիքցորային գի-  
նիներ, ինչպիսին են՝ պորտվեյնը, մադերան, մուսկատները  
և այլն, վորոնց արտադրութիւն համար վորչապի խաղողը

շատ քաղցրանա, այնքան ավելի լավ եւ Հետեւապես, այդ տեսակեանց, վորքան ուշ քաղենք այգին, այնքան բարձրարակ խաղող կունենանք արտադրութեան համար: Մակայն, քանի վոր այգեքաղը տեղում ե 20—25 որ, բայտք այգիները հնարավոր չե միանգամից քաղել, այգեքաղից հետո այգում մի շարք աշխատանքներ պետք ե կատարվեն, մանավանդ այգեթաղը, վորը տեում ե մինչև ձյուն գալը, ապա ուրեմն այգեքաղի ոկիզբը շատ չի կարելի ուշացնել:

Մեզ մտ ընդհանրապես համատարած այգեքաղի սկիզբը շատ իրավացիորեն հայտարարվում ե հոկտեմբերի 5—7-ը:

## ՍԵՂԱՆԻ ԽԱՂՈՂՆԵՐԻ ԲԵՐԲԱՎԱԿԸ

Անմիջապես տեղում սպառելու ե մեր քաղաքների ու արդյունաբերական վայրերի աշխատավորութեանը թորմ խաղող մատակարարելու համար, բերքահավաքն սկսվում ե համատարած այգեքաղից շատ առաջ ե կատարվում ե աստիճանաբար: Առաջին հերթին սկսում են հավաքել վաղահաս փոփոխակները, ինչպեսիք են՝ սև ե սպիտակ լեզանդարիները, սև ե սպիտակ խալիլիները, ասկյարին ե քիշմիշը: Երանցից հետո՝ ավելի ուշ հասնողները՝ խարջին, դառանդմակը, մսխալին, կախեթը (Ղամբրու) ե այլն:

Սեղանի խաղողները պետք ե հավաքել շատ խնամքով: Այստեղ հատուկ նշանակութունս ե ստանում նրանց թարմ ե առողջ վիճակում տեղ հասցնելը: Հաճախ այնքան անխնամ են վերաբերվում այս գործին, վոր խաղողը մինչև սպառողին հասնելը տրորվում ե, փշանում ե ուտելու համար անպետքանում: Երա համար ել հենց այգում պետք ե ցուլց տալ ուշադիր վերաբերմունք. վողկուղները պետք ե քաղել սուր դանակներով, բռնելով վողկուղակովից:

Սեղանի խաղողները հավաքելու համար պետք է գար-  
ժածել ուռնուց (ճիւղու) պատրաստած կողովներ, իսկ  
հեռավոր վայրեր ուղարկելու համար պետք է ունենալ  
հինգ-տասը կիլոյանոց փոքր, ստանդարտ արկղներ:

Յեթե խաղողն ուղարկում են մտտիկ շուկաները, այդ  
պետքում քաղած խաղողն զգուշութեամբ պետք է դարսել  
կողովներէ, կամ արկղներէ մեջ՝ կոթունները դեպի վերև  
դարձրած, փակել արկղներէ բերանը, իսկ կողովներէ լերե-  
սին կապել թանզիֆ՝ փոշուց պահպանելու համար, ապա  
բարձել ֆուրգոնին կամ ավտոմոբիլին և տեղափոխել:

Հեռավոր վայրեր խաղող տեղափոխելիս պետք է ավելի  
շատ խնամքով նախապատրաստել: Հեռավոր վայրեր պետք է  
ուղարկել ավելի դիմացկուն տեսակները, ինչպես՝ կն՝  
կախելժը, մսխալին, հաշարաշը, ալախիլին և այլն:

Յագողը պետք է քաղել շատ զգուշ, աջնպես, վոր  
վաշ մի հատիկ չջարդվի: Այնուհետև պետք է վողկուղիներէ  
վրայից մեկ-մեկ հեռացնել հոտած, չորացած կամ մեա-  
ված պտուղները, և ամբողջ խաղողը մի սը փռել, վոր-  
պետքի մի քիչ թառամի: Հաջորդ սըը խաղողն զգուշու-  
թեամբ պետք է դարսել նախորոք արկղներէ մեջ, վերջին-  
ներէս մտկերնայից բավական բարձր և, առանց վախենալու,  
արկղի կամ արիչի տախտակները վրան դնելով, զգուշու-  
թեամբ սխան՝ խուսափելով պտուղները ջարդելուց: Այս  
ձևով խաղողի պտուղները բայր կողմերից իրար սխամելով  
արկղում վոշ մի ազատ տեղ չի մտնւմ, վոր փոխադրելիս  
նանտպարհին նրանք շարժվեն և սրտրվեն: Այնուհետև  
պետք է մեխել կախարիչի տախտակները, և արդեն նա  
պատրաստ է ուզածդ տեղը փոխադրելու: Այս ձևով պատ-  
րաստած խաղողը միանգամայն թարմ վիճակում կարելի  
յն տեղափոխել բավականին հեռու տեղեր, ինչպես՝ Մոսկվա,  
Լենինգրադ և այլն:



## ՊԱՆՈՒՆԻ ԽԱՂՈՂՆԵՐԻ ԲԵՐՔԱՅԱՎԱԿԸ

Ձմեռվա թարմ գործածութիան համար, բնդհանուր բերքահավաքից առաջ պետք է կատարել պահուենի խաղողներին բերքահավաքը, վորի համար նախորոք պետք է տեղ և կախելու հարմարութիւններ ստեղծել, ինչպէս՝ կանեփի փայտից պատրաստված կախանի փայտեր, ճիւղու, սողոցի թեփ և այլն: Կախելու համար պետք է ընտրել այնպիսի տեղ, վորտեղ քացալս, դինի, մաճառ, մանավանդ, ջեջա չկա:

Ձմեռվա պահելու համար մեղ մոտ հասկացվում են հաշարաշը, մախալին, կախեթը, ամբարին, ալախկին և այլն. դրանք ունեն ամուր մաշկ և լերկար ժամանակ պահվում են: Աշտարակում մասամբ պահում են նաև խաբջին՝ համեմատաբար շուտ գործածելու համար:

Պահուենի խաղողների բերքահարաքի և փոխադրման կազմակերպման համար ավելի մեծ գոռուշութիւն է պահանջվում, քան սեղանի խաղողների:

Խնամքով, ժամանակին քաղած և լավ պահված խաղողը շատ լերկար, մինչև դարուն կարող է դիմանալ:

Պահուենի խաղողները պետք է հավաքել բնդհանուր բերքահավաքից 5—10 օր առաջ: Պետք է աշխատել այդ խաղողները հավաքել աշնան անձրևներից առաջ, վորտեղ հետև անձրևի տակ ընկած խաղողը լերկար չի դիմանում:

## ՎՄՄԱՏԱՐԱԾ ԲԵՐՔԱՅԱՎԱԿԸ

Համատարած բերքահավաքը կատարվում է այն ժամանակ, լերը խաղողը պիտանի չե վերամշակման համար: Արարատյան դաշտում այդ ժամանակը՝ լերկար տարիներին ընթացքում, ընկնում է հոկտեմբերի ակգրներից մինչև 20—25-ը: Հողժողկոմատի վորոշմամբ, այս տարի համատար-



բած բերքահավաքն սկսվելու լե հսկանները 5-ից և տե-  
վելու լե մինչև 25-ը:

Համատարած բերքահավաքի նախապատրաստման հա-  
մար վերևում բավականաչափ կանգ առանք:

Բերքահավաքի հենց առաջին սրվանից կադմ ու պա-  
րատտ պետք է անցնել աշխատանքի: Նախորոք պետք է  
վարոշել թե վնորտեղից է սկսվում աշխատանքը: Առաջին  
հերթին պետք է քաղել ծալքերում ու հետու ընկած ալգի-  
ները և այն ալգիները, վորոնց բերքն այս կամ այն պատ-  
ճատով փչանում է:

Գործը պետք է կազմակերպել այնպես, վոր քաղած  
խաղողն անմիջապես փոխադրվի մթերահայտն: Պետք է  
կարանկանապես վերացնել այն առվորութիւնը (Ղամարլու),  
լերը խաղողը քաղում ու կիտում են գետնի վրա և հետո  
փոխադրում: Քաղած խաղողը պետք է անմիջապես լցնել  
տակառները և փոխադրել:

Անհրաժեշտ է նաև վերացնել վերամշակվող խաղողը  
կողովներով տեղափոխելը: Պաղողը քաղելու համար գոր-  
ծածվող դուլներն ամեն որ, աշխատանքն սկսելուց առաջ,  
անհրաժեշտ է մաքուր լվանալ:

Պաղողը պետք է քաղել սուր դանակներով կամ ետի  
մկրասներով (սեկուսոր): Արգելվում է ձեռքով կամ բուխ  
դանակներով խաղողը քաղելը:

Պաղողը թփից այնպես պետք է կտրել, վար, ինչպես  
ասում են՝ վաղը «չզդա»: Ձեռքով քաղելիս կամ բուխ գոր-  
ծիքով աշխատելիս խաղողը տրորվում է, շիրան թափվում,  
հաճախ վողկուլոն ընկնում և գետին ու կեղտոտվում: Ձեռ-  
քով քաղելիս վողկուլոլի հետ միասին հաճախ շարվում են  
բերքատու մասերը:

Պաղողից վորակիլալ խմիչքներ և զանազան մթերքներ  
պատրաստելու համար հատուկ ուշադրութիւն պետք է

գարձնել բերքի տեսակավորման վրա: Այստեղ շատ բան կախված է հատկապես «Արարատ» արևատից և նրա բաժանմունքներից. վերջիններս այդ առթիվ պետք է ներկայացնեն իրենց պահանջները: Կուլտուրական ազեղործական շրջաններում խաղողը հավաքելու ժամանակ իսկուհն տեսակավորում են:

Բերքի տեսակավորումը պետք է կատարվի քաղելու պրոցեսում, վորն ընթանալու չէ հիմնականում չերեք ուղղութչամբ: Ամենից առաջ պետք է առանձնացվեն հոտած խաղողները, վոր արդյունք է ժամանակին պուլխըողիս միջատի դեմ պայքար շտանելու: Այնուհետև պետք է առանձնացնել հիվանդոտ, չորացած և խակ մնացած վողկուղները: Իրանք վոչ մի դեպքում չպետք է խառնվեն մնացած խաղողին: Այնուհետև պետք է առանձնացվեն սև և սպիտակ տեսակները: Յեվ, վերջապես, վորոչ նպատակների համար անհրաժեշտ է առանձնացնել առանձին սորտերը, որինակ՝ խարջին, ճիլարը, մսխալին, կախեթը և այլն:

## ՊԱՅԳԱՐ ԿՈՐՈՒՍՏԻ ԴԵՏ

Համկոմկուսի Կենտկոմի և ԽՍՀՄ Ժողկոմխորհի վորոշման մեջ սաված է. «Բերքահավաքի ամբողջ աշխատանքները պետք է կատարվեն կորուստների դեմ պայքար կազմակերպելով»:

Կորուստների դեմ մղվող պայքարն ավելի մեծ նշանակութչուն է ստանում խաղողի բերքահավաքի ժամանակ: Բերքի 10—15% -ը կորչում է մեր անկազմակերպվածութչան և գործին անհողի վերաբերմունք ցույց տալու հետևանքով:

Պետք է իմանալ, վոր յուրաքանչյուր վողկույզ մեծ աշխատանքով է ձեռք բերված և անհրաժեշտ է բուրբի ու-

շարունակութիւնը կենտրոնացնել բերքի անկորուստ հավաքման վրա: Մինչդեռ մեր այգիներում ամեն տարի ավելի շատ բերք եւ լինում, քան մենք հավաքում ենք:

Բերքի կորուստներ տեղի յեն ունենում զանազան ճանապարհներով: Կորուստներ լինում են և՛ պահպանությանը վատ կազմակերպելու, և՛ ինվեստարն ու ամանեղենը վատ նախապատրաստելու հետևանքով: Սակայն բերքի խոշոր կորուստները անդի յեն ունենում այգեբաղի, բերքի փոխադրման և վերամշակման ընթացքում: Իրա համար ել ուժեղ պայքար կորուստների դեմ պետք եւ մղեց այս շրջանում:

Ինչ չեն դեպքեր, յերբ խաղաղը քաղելիս յերբեմն դիտարկելու, յերբեմն զարծին անհոգի վերաբերվելու հետեւյալով մեծ քանակութեամբ խաղող եւ մնում վաղերի վրա: Իրա համար ել պետք քաղի ընթացքում սահմանել ուժեղ հսկողութեան և, առանձին այգիներն ու կտորները քաղելուց հետո, հատուկ մարդկանց միջոցով ստուգել՝ մաքուր եւ քողված, թե վաղ, վաղերի վրա չեն մնացել վողկույցներ, և այդպիսի դեպքում նորից հավաքել տալ:

Պատահում են և այսպիսի դեպքեր. խաղողի վողկույցն անհարմար անդից բռնելու հետևանքով գցում են ցած— թափվում են նրա վրայի պտուղները, վերջիններխ մեծ մասը ջարդվում եւ, հոսում եւ շիրան ու փչանում: Ետո անգամ դեռին ընկած խաղողը զժվարանում են վերցնել, մինչդեռ պետք եւ թափված պտուղներն անգամ հավաքել:

Այգեթաղի ընթացքում յուրաքանչյուրից պահանջվում եւ մեծ զգուշութիւն, հուսադատութիւն և խնամքոտ վերաբերմունք:

Յոշոր կորուստներ լինում են դուլերի և ասկառների էնքեր ու անցքեր ունենալու հետևանքով, վորան-

դից շիրան հոսում եւ կորուստներ լինում են խաղողը դուլերից շալակի տակառները լցնելիս, խաղողը սայլերին ու ֆուրգոններին բարձելիս ու դատարկելիս, յերբ մարգիկ աշխատում են անըտրեխիղճ կերպով, Կործին նայում են մատների արանքով և աշխատանքի ժամանակ հանդես են բերում այսպես կոչված «շփոթութուն»:

Խաղողը փոխադրելիս պետք է տակառներն ամրացնել սայլերի վրա, տակը խոտ զնել, լցնել կիսատ, վորպեսզի ճանապարհին չշարժվի և չթափվի:

«Վոչ մի վողկույզ, վոչ մի պտուղ խաղող, վոչ մի կաթիլ շիրա չպետք է կորչի կամ վշանա» — այս նշանաբանի տակ պետք է կատարել բերքահավաքը:

Այս տարվա խաղողի բերքահավաքը պետք է ընթանա չափազանց կազմակերպված, լավ նախապատրաստված և առանց կորուստների:

Աշխատանքների նախապատրաստման սկզբից մինչև բերքահավաքի վերջը պետք է լախ կերպով ծավալել սոցիալիստական մրցումն ու հարվածայնութիւնը: Մրցումը պետք է ընդգրկի կոլտնտեսութիւնները, բրիգադները, ողակները, անհատ կոլտնտեսականներին և մենտոնաեսներին: Վոչ վոր չպետք է դուրս մնա մրցութեան շարքերից:

Սոցիալիստական խանդավառ արշավ դեպի բերքահավաքը:



Խմբագիր՝ Գ. ԳՐԶՆԻՑԱՆ  
Յեկ. խմբ.՝ Լ. ՄՈՒՐՄ.ԳՅԱՆ  
Կնգվ. խմբ.՝ ԱՐՐ. ԳՐԻԳՈՐՅԱՆ  
Մտրագրիչ՝ Գ.Ա.Ր. ԼԱԿՈՐՅԱՆ

Փրովկեան լիպոս Ծ.—440, Էքամ. № 273, պատվեր № 555, տիրոժ 3000  
Հանձնվել է արատագրության 1935 թ. սեպտեմբերի 28-ին  
Մասրազրվել է ապելու 1935 թ. հոկտեմբերի 3-ին

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220038176

УДК 60.409

[104]

A  $\frac{\bar{\Pi}}{38176}$



П. ШАТВОРЯН  
**СБОР ВИНОГРАДА**

СЕЛЬХОЗГЧБ 1935 ЗРИВАНЬ